ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԷԱՃԱՊՁԲ-9/7-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 16 -ը ապրիլի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս **ընկերության տնօրեն Ա. Ասատրյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **12.02.2019թ.** կնքված № ԷԱՃԱՊՁԲ-9/7-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. *Համաձայնագրի առարկան***

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***738,000 (յոթ հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Նատալի Ֆրամ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/h 1570005065330100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01222567 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | տնօրեն |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ա. ԱՍԱՏՐՅԱՆ |

2/8' 005140934

Հավելված N 1
N ԷԱՃԱՊՁԲ-9/7-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/մ | Քանակ | Միավորի գինը /դրամ/ | Ընդհանուր գումար /դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2019թ., ըստ համապատասխան եռամսյակների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ, | 3-րդ եռամսյակ, |
| 1. | Մետոկլոպրամիդ, metoclopramide | հատ | 15,000 | 49.20 | 738,000 | 7,500 | 7,500 |

Հավելված N 2
N ԷԱՃԱՊՁԲ-9/7-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին ՀՀ /դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2019թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայցոչ ուշ, քան 10.12.19թ. |
| 1. | **Մետոկլոպրամիդ a03fa01** /Մետոկլոպրամիդ, metoclopramide/ | 33611160/507 | 738,000 | 369,000 | 369,000 | 369,000 | 738,000 | 738,000 | 738,000 | 738,000 | 738,000 | 738,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարության<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | «Նատալի Ֆրամ» ՍՊԸ<br>տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ա. ԱՍԱՏՐՅԱՆ |